

# ՅՈՒՅՆ

ՊԵՐՃ ՊՈՌԵԱՆՑԻ

(Հարունակութիւն 1)

Ժ.

Երկու շաբաթ յերոյ է, մենք դարձեալ նոյն Նուշչիբիլակ գիւղումն ենք, վերադարձել ենք Սիւնիքի Տաթեռու վիճակից: Հիւրասիրուել ենք զիւղի առաջաւոր ծերունի Զօհրաբ ամուլ գանը, ուր նախկին գալստեանս իջևանած էինք:

Գիւղական տէր Մ. քահանան, որ անցեալ անգամին իջևանածս բոսկից մեզանից անբաժան մնաց, դարձեալ, կարծես, հոգով իմացաւ վերադարձս. որքս ձիու ասպանդակից դեռ չէի հանել, որ ինձ օգնում էր իջնելու:

—Այ երէց, հերիք չի, ձեռք բալով՝ ասացի ես:

—Մեռել ես՝ քեզանից բաժանուողը չեմ: Եւ տէրտէրը թես ընկաւ ու առանց գանդիրոջը բեղեկութիւն բալու՝ քարշ բուեց, ու Զօհրաբ ամու հիւրանոց-սենեակի դուռը պինդ հրելով՝ շրջենկացրեց պատին ու ինձ ներս բարաւ:

Երեկոյեան պահն էր պատուելի ծերունին, երևի, փոքր ինչ սպամքսին բաւականութիւն էր տուել ու կամեցել էր իւր յոզնած կուռ ու ճուռի սիրան էլ շահած լինել, ալեղարդ գլուխը չոր բարձակալին դրած՝ հանգստանում էր:

<sup>1</sup> Սկիզբ Մուրճ 1900թ. № 1, 2:

Դրան թրիսկոցն և մեր աղմկալից ներս խուժելը խեղճ ծերունուն թարժած արին. շշմած վեր թռաւ, նարեց ու բերանը կիսաբաց, բոպէաչափ ապու շի պէս նայում էր մեզ:

— Նէ, ես քո գերեզմանիդ վրայ զինի լցնեմ, ճշաց տէրտէրը, սրան տեսէք, շուր շուր էլ պարծենում է, թէ մազերս սպիտակել են, համա սիրաս վարդի պէս կարմիր է: Այդ է փթել ես, թէ չէ ընչիմ չըպիտի ինձ նման դռուզ պղամարդի պէս՝ Դրան ձայնն առնելուս՝ գեղիցդ ցոփ վերթռչէիր ու մեր սիրելի հիւրին գրկէիր:

— Մեր աղէն աչքիս ու զլիսիս վրայ է շնորհ բերել, ուշքի գալով պարախանեց Զօհրաբ ամին, բայց քո անկարգ շարժմունքից դեերն իրանք էլ Դիւադադար կը լինին, ոչ թէ մարդիկը: Հեր օրհնած, Դեռ դուն մորիր, ինձ զարթնացրու, աղի գալն աչքալոյս դուր, որ ներս չըմքնի ու մեզ էսպէս անքաղաքավարի գրնի: Ներիր, աղայ, անկարգութիւնիս, մեղքն էս դաւարի ցաւինն է, որի ինչ լինիլը Տաթեւ գնալիս՝ բարի աչքովդ տեսել ես. քանի ասացի, այ երէց, մի՛ գնալ, շնորհքներդ քեզ համար պահիր, շեղաւ, ըլկարողացայ իսօսք հասկացնել: Եթեկ թէ շատ սպարզերես է գտնուել մօրդ, վերադարձին եկաւ փողոցի մեջ նսպեց, դիւղականների առաջին պարծենալով պատմեց: Ներիր աղայ, մեր ցաւն է, ընկել է վիզներս, պիպի քաշենք, մինչև Ասորուած ձեռներիցս առնի՛ մենք էլ հանգստանանք ու ինքն էլ:

— Մինչեւ զիւշիս ծերերի գերեզմաններին զինի չածեմ, ինքս մեռնողը չեմ, զլուխը թափահարելով շեշտեց տէրտէրը:

— Գինի ձեռքդ ընկնելիս՝ կսկորդովդ ես ցած լցնում, համբերնում ես, որ գերեզմանն օրհնես, մի քանի կաթիլ վրան շաղ դաս ու նոր լինս:

Զօհրաբ ամին կողքին Դրած բարձը Դրեց նոյն բարձակալի վրայ և ինձ համեցէք արեց: Ծերունին խնայել էր հիւրի համար յարկացրած բարձը ախտորոշել, բարձակալի չոր դափարակի վրայ էր հանդիս: առել:

Այդպէս են Ար չարքաշ զեղջուկները, իրանց անձից աւելի են պարոււմ «Ասորուծոյ» հիւրին, իրանք ցամաք հացով բաւականանում են և ամէն համել պարառ հիւրի համար ստահում:

— Հէնց քեղ մարտաշ՝ աղայ, մեզ պարուաւիրելու բոլոր անօրէ-

Կութիւնները գնեցիներին անկուց յերոց, ներս եկաւ և խնդրեց Զօհրաբ ամին, մի ասա, վեսնենք՝ ուղիղ էր պարմում էս անշնորհք քահանէն իր արած խայրառակչութիւնները, թէ իր կարճ խելքով պարծանք էր համարում ու դուրս դալիս:

— Իոլորը ճիշդ էր, ժպրացի ես:

Դիմացաւմնք չըտալու համար՝ ասենք, որ Ղուշիբիլակի Մ. քահանայի համբաւը շրջակայ դաւառներում հանրապարած էր:

Թողնենք նրա գինեմոլական հակումը, որ տարաբաղդաբար՝ եթէ ոչ նոյն չափով, բայց ընդհանուր է մեր գիւղական հոգեոր հայրերի համար, ու իր Մ. յայրնի էր իւր ախորժ սրախօսութիւնով և յանդուզն արարքներով ու սիրելի հաճոյականութիւններով:

Երկրորդ երիտասարդութեան հասակը ոսկը կոխած, մի աշխոյժ, մի կայտառ, մի զեղեցկափեսիլ, չէկամօրուս, լայնամօրուս, երկարամօրուս ու էրպակէր էր Մ. քահանան: Նրա թանձր յօնքերն և խոշոր ու մշտաժպիք աչքերը շատ այրի գեղեցկուհիների մինչեւ սրափի խորը կատասէին, եթէ ուկր-հայրական նուիրականութիւնը չըզսպէր հեշտասիրութեան թափը: Մեղքը բամբասաւէրների վզին, պատմում էին, որ ներողամրաբար՝ ուկր հայրը՝ նախօրոք՝ թողութիւնը շնորհել էր այդ «փոշերեսակ» սիալանքի ճանապարհը սիրող իւր Շողեոր դուստրներին:

— Հենց էն ապարազդ օրից, որ ես գրկուեցի իմ հարազար ափիրուհոց, մի «ողորմեսցի» էլ իմ գլխի համար իմ մշտնջենական կարդացել, չէր թագցնում պարզապէս հարցնողների առաջ իւր խոսքովանութիւնը ուկր Մ—ը:

Իշխանութիւնից բազմագեսակ յանդիմանութիւններ և պատրիժներ սրացել ու շարունակ սպանում էր ուկրպէրը, բայց նա դարձեալ չէր քաշւում պարզ ասել.

— Փիրոնիս հետ կը խոռվեմ, իսկ ուիրուհուս գուած անմեռ վիշտը քաղցրացնողներից՝ ոչ, ոչ ու ոչ, երեք անդամ էր շեշտում երեցը:

Զօհրաբ ամու և շարերի ասութեամբ՝ ուկրպէրի մորմոքը դէսի իւր ուիրուհին անփեղծ էր: Քահանան ամբողջ երկու պարի պառնից դուրս էր դալիս միմիայն պաշտօնակագարութեան անհրաժեշտ միջոցին, երեսի վրայ կործ՝ անընդհարությունում էր, հալուել ու մաշուել էր. մի այրի կին միայն կարեկցելով իրիցի վշտալից վիճա-

կին՝ աստիճանաբար երկու դառն փարիներից յերոյ՝ մեղմացրեց նրա թախիծը:

Այսուհետեւ երէցը ընդ միշտ գպաւ իւր տրումահալած ամօքիչ դարմանը:

Արդեօք ժամանակիս փչութիւնը, թէ հոգեոր հօր ժողովը-դասէր և դարդիմանդ բնաւորութիւնը ներելի արեց նահասվեփական ռամկի աշքում ոչ միայն քահանացին՝ նոյն իսկ աշխարհականին անվայիլ զեղծումը, մի օր կար, այդ ժողութիւնը արիւնով էր մաքրուում, իսկ այսօր՝ աշքի պոչով են ամենքը մորիկ փալիս:

Զօհրաբ ամու հարցասիրական գենչն յագեցնելու համար՝ համառօպապէս պատմեցի իրան, թէ ինչպէս տէր Մ.—ն ինձ հետ դէսի Տաթէ ճանապարհորդելու հէնց առաջին օրը՝ յետ մնաց մեզոնից:

Ա. մալականաբնակ զիւղում փէրտէրը մի ասել դառաւ և աշք-ներիցս չըացաւ:

Ես չըգիտէի քահանացի թոյլ բնաւորութիւնը, նա, թէսէր, նախընթաց երեկոցին, Զօհրաբ ամու գանը սեղանին դրուած խմիչքի մեծ մասն իւր կոմորդով ներս ածեց, բայց այդքանը բաւ չէր մի զինեսպառ մարդի պակասութիւնը նկատելու համար:

Ասպուծոյ պաշտօնէի այդ արարուն երեսս զարկեց մեզ հիւրընկալող մալականն և աւելացրեց. դուք զուր կը սպասէք ձեր հոգեւոր հօրը, նա իւր գրպանում ունեցած օղիով սիրաշահելու է մեր մաքրակենցաղ մալականութեան արարիք բերող մի երկու անուանարկուած կանանց, որոնց մեր համայնքից արդաքսելու համախօսականն արդէն պատրաստ է. իսկ այդ անբարոյականութիւնը մեր զիւղը ներս բերողները մի քանի պաշտօնական անձինք են և ձեր Ասպուծոյ սպասաւորը: Իմ խոնարհ խորհուրդս է ձեզ ուղեորուիլ. քահանան երբ լինի՝ ձեզ կը հասնի:

Մալականի խօսքն երկարժամանակեայ փորձառութեան վրայ էր անշուշտ հիմնուած: Հետեւեալ հայաբնակ զիւղում, գէր Մ—ը մեզ հասաւ, բայց ես այլ ևս ինձ չընկերացրի. վիրաւորուած՝ վերադարի:

Մի գեղեցիկ նորարի կնոջ հասցէին պատիւ արարաւորող խօսքեր շռացլելու պատճառաւ՝ գէրտէրը փառաւոր քոթակ էր կերել տիկնոջ խանդուր ամուսնուց: Եւ եթէ ես ուշանացի մեր տէրտէրին ձի

Նստացնել և վերադարձնել բալը. նրա գլխին կոտրատիոսի բօնը աւելի փառաւոր պիտի կարարուէր: Խսկ իւր այդ խալքառակչութիւնը բէրդէրն եկել և պարծանքով իրանց դիւղումը մանրամասնորէն պարմել էր:

—Դարդ մի' անիլ, ասաց ինձ բէր Մ--ը. էգուց հետո գալուս՝ Դարալագեազի գիւղերում քեզ էլ ամօթով չեմ թողնիլ վայրենի Զանգեազուրցիք էին, կարակներ չէին հասկանում. մեր ժողովուրդն ինձ ճանաչում է և բոլոր գուարճախօսութիւններս սիրով բանում:

—Նեղութիւն մի' քաշիլ, պատասխանեցի ես, առանց քեզ եկել եմ, առանց քեզ էլ կը գնամ:

—Քայլ չես համարձակիլ անելու, պնդեց բէրդէրն և այնքան յամառութեամբ հակած առեց իմ և Զօհրաբ ամու հետ, մինչեւ երկուս էլ զիջանք բէրդէրի պատրաստակամութեանը. մանաւանդ՝ որ ինքն ազնիւ խօսք բուեց անսուաղ (անօթի) գալ և ինձ ճանապարհ չըդրած՝ բերանը կաթիլ չառնել:

Վճռուած էր. վաղն առաւօք գնում եմ և քահանան ինձ ուղեկցում է մինչև Գեղարքունի գաւառի սահմանագլխի դիւղը:

### ԺԱ.

Երկրորդ առաւօքը ես յեռ քնած եմ և դուռս բաշխում են: Քահանան ինքն է, որ կազմ ու պարրասպր շրապեցնում է ինձ ճանապարհ ընկնել: Տէրդէրի հետ է դեղական բանութէրից ինձ հետեւրդ նշանակած գիւղացին:

—Այ երէց, ասում է քահանացին հիւրասէր Զօհրաբ ամին, էս գիշեր քունդ չի բարել, սպասիր՝ հեշտացեռը պատրասպուէ, նախաճաշեցէք և այնպէս ճանապարհ ընկէք:

—Մօպիկ գիւղերում փորերս բուզացնելու բան կը գտնենք, պարասխանում է բէրդէրը, իսկ հիմի պիտի օգտուել առաւօքեան անուշ օդից. լսիր՝ թէ ինչպէս են բիւլբիւլներն իրանց Փառքի բարձումն երգում:

Տէր հօր բանասրեղծական խանդը չըշիջուցանելու համար՝ համակարծիք գրնուեցայ հետը և Զօհրաբ ամուն բարե միայ ասացի:

—Երէցը լուրջ է երեռմ, «Փառք ի բարձունք» ից է խաթար տալիս, կարծես խօսքը պահել է, բերանը կաթիւ չի առել էն, փառաւորի ինքը, զոնէ քեզանից ամօթանք է բաշել, փսփաց ականջում Զօհրաբ ամիս:

—Ընչեց հասկացար:

—Տերանիցը հոր է՞ր դալիս, ուրիշ ժամանակ մօր գնալ չի լինում, տիկի սիս է հոգում:

—Ուրեմն ուրախ եմ: Մնան բարին:

Զորս հրացան մեղ պաշտպանող զէնքին են, որոնցից իմը՝ նոր սիստեմի, մնացած երեքից՝ ծառաշինս՝ պիտոնով, քահանային փեսան դուրս եկաւ:

Զորս հրացան մեղ պաշտպանող զէնքին են, որոնցից իմը՝ նոր սիստեմի, մնացած երեքից՝ ծառաշինս՝ պիտոնով, քահանային ու փեսայինը՝ հին ձեր քար ու շախմախով:

Կշտացած ու հանգստացած ձիանքը քթերը հովին բռնած՝ փոնգավալով ու որքերը խաղացնելով՝ սրարշաւ բարձրանում են Վայոց ձորն ու Գեղարքունու գտւառն իրարից անջագող լիռն ի վեր:

—Գիտեմ ինչ, պարմն, դարձաւ ինձ քահանան, երբ լեռնաթմբով պիտի թեքուէինք դէպի արևմուտք լնկած մերձակայ զիւլը. եթէ դու ցանկութիւն ունիս այցելելու Դարալազեազի հնութիւններն ու վանքերը, չորս օրուայ մէջ հեշտ ու հանգիստ քեզ կը հասցնեմ Գեղարքունու սահմանը. իսկ եթէ կը կամենայիր՝ յառաջ ընդանիքիդ հետ գրկախառնուել, որոնք քո ասութեամբ՝ նոր Բայազիդումն են, այդ դէպում՝ ես էսօր՝ արեւ դեռ արեմուտք ըլթեքուած՝ քեզ կը հանեմ ծովափին մօր Գեօզալշարայ զիւլը, որ Գեղից մինչեւ Նոր-Բայազիդ՝ մի ճաշուան մանապարհ է:

—Մի պայմանով, տէրպէր, ասացի, որ այս լեռան արևելեան կողմի ձորը չըմինենք:

Խօսք նաշոյի հետ եկած ձորի մասին էր:

—Խելքս հացի հետ եմ կերել, որ իմ որքովը մակաղ գնամ մարդակերաւազակներին, ասաց քահանան, Ծնդհակաւակն իմ առաջնորդելիք ճանապարհով գդակդ թեք ծոիր, իսաղ ու տաղ ասելով՝ զեա: Միայն առաջուց ասում եմ. համբերութիւն ոիտի ունենաւ Դիմացներիս լեռը մի քանի ժամ բարձրանալու: Աւ սարը շաբ

սրա-զլութ լինելու պարմառով՝ «Փալան թօքնան», և առում, որ անօրէնի լիզուով նշանակում է՝ համերը, կամ թարբը ձիու միջքից ցած զլրող սար:

—Մեր ողբերին հօ՛ նեղութիւն չինք տոլու, պարախանեցի տէրտէրին, իսկ մեր գրասրները վարժուած են այդպիսի դժուարութիւններին:

—Ուրեմն, ձիու տանձը թեքիր դէպի հիւսիս և լեռն ի վերքշիր, ասաց տէրտէրն և յառաջն մեզանից:

Բարձրանում ենք ու բարձրանում, ոչ աջ ենք ծուռում և ոչ ձախ, մինչև ծունկը կանաչ խոփերն ու անուշահոր հազարերանդ ծալիկները որորելով մեզ համար ճանապարհ ենք հարթում:

Անբան մեր գրասրները քրտնքի մէջ ջրաջլբում են, գրլորշին եռ եկած վլատի ջրից աւելի է բարձրանում, լեզուները կև գազ կախած։ Հեացող ու հեթացող անասունների վրայից, թամբերը անդգալի կերպով՝ մեզ իրանց վրայ ստած՝ տեղահան են ել' և հասել ձիանց պաշերի զլութը։ Լաւ էր, որ մեր բոլոր հեծած ձիանքը կրծկապներ ունէին, սովա թէ ոչ, թամբերի հետ հեծեալներին էլ պիտի զլորէին ձիու վրայից, և վայը կը դար այն ժամանակը մեր զլսին, ու լուծակի լեռան ծալրից անիւի նսան զլդի-զլոր դալով, նորից մինչև Զօհրաբ ամու տունը սիրի սահեինք։

Օրն եկել է, 11 ժամը հասել, բայց մենք դեռ Փալանթօքեանի կիսումն ենք, ձիանց ողբերը հազիւ են շարժուում։

—Քո որունը բրինձ լցուի, այս տէրտէր, ասում եմ, այս բնչ խաղ խաղացիր մեր զլսին, վեր նացիր, քո Փալանթօքեանդ դեռ չենք կիսել։

—Քիչ էլ, քիչ էլ, համբերութիւնը կեանք է, ծալրեց ինձ Ասրուծոյ պաշտօնեան, ինչ է մնացել։ Պեսնում ես հովիւն իր հօգով սարի թմբից մեր երկուութեան վրայ զարմացած՝ մեզ է նայում։ Հովուի մօտ եթէ հասնենք, միենոյն է, թէ լեռան զլսին ենք, իսկ սարի գաղաթից աչքերդ պինդ փակիր ու քեզ ցած թող, մի քանի բոպէից՝ աչքերդ բաց արա ու քեզ զրիր նոր-Բայազիդի գաւառի Գեօզալդարալի եալաղում (ամարանոցում), ուրեմն, զիւշն մի ժամ մնացած։

Տէրտէրի ասութեան առաջին կրորը մասամբ ուղիղ էր, հո-

վիւը մեզանից հարիւր քայլ հազիւ հեռու էր. բայց այդ հաշիւր քայլին հարիւր րոպէն թիչ էր մեր յոգնած ու քաղցած գրասփների որքերով բարձրանալու համար:

—Այ տէրտէր, ձայն բուեց ծառաս, դու և քո փեսան հրացաններիդ չախմախները լաւ գեսէք, եթէ պակասութիւն կայ՝ ուղեցէք՝ քանի ուշ չէ:

—Այ բալամ, (զաւակ), քո հրացանդ լիքն է, ձայն բուեց տէրտէրն իր փեսացին:

—Ուզեցայ բանը լցնեմ, բայց վառօթ չունեի, շամփուրն էլ կորած էր, կուշ գալով պարասխանեց աներոջը փեսան:

—Տօ, Բարաղամի աւանակ, հապա ընչի՞ ինձ բանը չասացիր, որ վառօթ էլ բայի, շամփուր էլ, Դէ երկարականջ, քթերեցդ դուս գան աղջկանս համբոյըները:

Փեսան կարմրեց մինչեւ ականջները, բայց իւր կողմից չուշացաւ նկատողութիւն անելը.

—Ի՞նձ, ես ասում, տէրտէր, հապա որ քո հրացանի չախմախը քարը չունի:

—Ամ օթ քո երկար մօրուքին, իզիթ (Կորիճ) տէր Մ., շեշտեց յանդիմանութիւնն իւր հասցէին քահանան, նոր է միտս գալիս, որ երկու ամիս յառաջ Սիսիանցի Զամալ բէզն եկել էր մօտս հիւր ու չախմախաքար չունէր, որ չիթուիսի կրա՛ վառէր, ես իմ հրացանիս քարը հանեցի ու բաշխեցի:

—Դէ, հիմի գնա, դիմացի սարից ցած եկողների պարասխանը տուր, յանդիմանեց փեսան աներոջն և զլսով ցոյց բուեց լեռան արևելեան կողմից Դէպի մեղ եկող բամանեհնդ սպառազինուած հեծեալներին:

—Վայ ձեր ճանապարհն անիծած, սարանի սերունդներ, բացականչեց քահանան՝ մարտով ցոյց բալով ինձ ձիւառներին: Դէն, պարմն, ուշանալու ժամանակ չէ, Դրանք Սուլէյման բէզի մարդիկն են, առաջներինը Սիւլէյման բէզն ինքն է, ես ճանաչեցի բակի սպիրակ ձիւցը, որ երկու բարի յառաջ խլեց մեր Զօհրաբի տղացիցն ու, ասում են, բարած օրից՝ ուրիշ ձի չի նարում: Անիրաւը քանի ժամանակ էր՝ կորած էր, Գաւառցի Յունօյի երկիւլից՝ մեր կողմերը չէր կարողանում գալ, իսկ հիմի՝ որովհետեւ Ղարաբաղի

սարւորները մեր լեռներն են բարձրացել, հիմի ողպին դեղէ արել: Երկիրը տակ ու վրայ կանի ու սար եկած թուրք բէգերի մօտ կը թագչի: Անիծածներն անունները խաղաղ ժողովուրդ են Դրել, հօգերի ու նախիրների պէրեր են և հայամլերութիւնից ձեռք չեն քաշում: Եփապե՞նք, շփապե՞նք, մեզ զցենք հովիւների մօտ, գնորինեց քահանան և իւր ձիուն կրնկեց:

Զուր էր պէրպէրի և մեր աշխարութիւնը, գրասրներս յառաջ չեն գնում, ծնկների ոյժը կարուել է, սորիպուած եղանք ծանր ծանր գնալ:

Մեր բաղդից՝ լեռն արեելեան կողմից գոգաւորուած էր, սարի կարարից մի ձորակ ասրիճանաբար լայնանալով, Փալանթօքեանն երկու մասի էր բաժանել: Աւազակները սարի արեելեան բաժնի լան-ջով՝ հորիզոնական մի բարակ շաւլով գծաւորուած՝ դալիս էին անդնելու լեռան արեեմբեան մասը, ուր մենք էինք գինւում: Հեռուից՝ հրոսակի խումբը նմանում էր երկնքի երեսին թե ոտող կոռւնկների կանոնաւորուած կարաւանի, որոնք ուղղաձիգ փառւած իրանց առաջնորդողի եփեից՝ մի գծի վրայ թեափարած լողում են օդի մէջ: Աւելի յարմար նման ութիւնն ասիական ուղիքերի շաբքերն են, որոնք միենանց քամակից՝ առանց աջ ու ձախ շեղուելու՝ ծանք ու դանդաղ քայլերով յառաջ են շարժւում:

—Նացիր, մի լաւ նացիր Սուլէյման բէգին, մաքնացոյց արեց ինձ տէրպէրը, տես՝ որքմն զէնք ունի վրան. լսել էի, որ եկել է մեր սարերը և չէի հաւափում, հիմա բաց աչքով իրան տեսնում եմ:

—Եթէ լսել էիր, հապա ընչնտ եկար այս ճանապարհով, հարց պուի ես:

—Ե՛հ, թս եկայ, ինձ բերեց:

—Ո՞վ բերեց:

—Լուսութէմին դափարկածս երեք թէջի բաժակ, քարը ճաքացնող, թունդ արալը, պատասխանեց երեցն ու շարունակեց. բաժակ բաժակի եփեից՝ կոկորդիցս մի ումկով ներս լցրի ու ձի նըսպալ: Եաբ ափանս, անիծեալ լինի Սուլէյման բէգը, մի անգամից արալը փորումն ջուր կարացրեց:

—Իսկ տուած ագնիւ խօսքդ ուր թողիր:

—Դրա պատասխանը յերոյ, դափողութիւնների ժամանակ չէ,

լրջութեամբ ասաց քահանան, դեռ մի գրեսակ անենք, հովուի մօլու հասնենք, որքան և լինի, շունչ է, քիչ ու շատ ապահովութիւն է. թէպէս՝ շունը շանից, երկուսը մի գանից», հովիւր նմանապէս թու բք է, շունը շան միսը չի ուտիլ:

Քահանայի առաջարկութիւնը սրտի բնագէտակոն անդորրութիւն էր, ուարզ էր, որ մինչև մեր յոզնած գրասրները ու շահացեաց բարձրանալով մի քայլ կանէին, աւազակների ձիանքը հորիզոնական շաւզով երեք անգամ գասը քայլ կը փոխէին:

Մեր ենթադրութիւնը ստիան սիսալ դուրս եկաւ, Սուլէյման բէզը մասը վեր բարձրացրեց և իւրայինները բոլորեքեան փեղները մնացին միտուած: Ել չրլաեցինք, թէ ինչ կարգադրութիւն արաւ Սուլէյման բէզը, այսպահնը միտյն գիսանք, որ իւր երեսից եկող ձիաւորն առաջ անցաւ և ների նման սլացաւ դէպի մեր կողմը: Երկու րուղէումը նա իջաւ ձորակը, փոքր գեղ ձին աշցանակելով վեր բարձրացաւ և ձայն փուեց.

—Հովին, այ հովին, ներքեւ արի:

Հովիւր քան քայլ հազիւ մեղանից վեր էր, մենք արդէն մօգեցել էինք իրեն:

Նա թողեց իւր հօպը, ցած վազեց և հարիւր քայլաշափ հեռաւորութիւնից՝ ձայն փուեց աւողակին:

—Ի՞նչ հս ուզում:

—Հարցրու՛ նզ ին դրանք, ձայն փուեց աւազակը:

—Ո՞վ էք, կրկնեց սւազակի հարցը՝ դէպի մեզ դառնալով հովիւր:

—Երանա՛լ է (генералъ) պարասիանեց իւր կողմից յանկարծ գէրգէրի փեսան:

—Երանա՛լ է, կրկնեց մեր ձիաւորի խօսքը հովիւր:

—Երանա՛լ է, ձայն փուեց ձորակի թմբից դէպի իւրեանց խումբը բանբեր աւազակը:

—Դրանց միջից նըն է երանալը, պարզամ արձակուեց Սուլէյման բէզից և իւր բանբերի ու հովուի միջոցով պարասիանը գեղ հասաւ.

—Սուաջից գնացող սպիտակ պոչաւոր գլխարկ ծածկողն է, եղաւ քահանայի փեսայի պարասիանը:

— Ապրիլ փեսաս, ապրիլ, բացականչեց տէրտէրը, ալջկանս համբոցը մօրդ կաթի պէս քեզ անուշ, իրաւունք եմ ուալիս՝ օրական հարիւր համբոցը հազար շինել։ Տեսանք, պարզն, փեսացիս խելքը, Փրանգն ու Խնդիրը գլուխները քարովն են ոռուել սրա հանձարի առաջին։ Ո՞վ կասէ թէ երանալ չես, գդակիդ սպիտակ փաթաթանի պոչը, որ օդի մէջ խաղում է, հեռուից մորիկ պուղի աչքին, քեզ շահից ու սուլթանից բարձրացնում է։ Լսիր, լսիր, ինչպէս են քռքռալով ծիծալում փեսացիս խօսքի վրայ աւաղակները։

Սրդարեւ աւազակացին խմբի միջից մի քրքիջ բարձրացաւ, սլարդ երկաց, որ ծալր էր Դէպի իմ երանալութիւնը և հեղնալից արհամարհանք, լսու որում սպարգամաբեր աւազակը չուշացաւ իր պեսի հրամանը հովուի բերանով մեզ հացնելու։

— Սուլէյման բէդը հրամայում է, գոչեց հովիւր Դէպի մեզ, որ Դուք՝ ձեր երանալին առաջ քցած՝ համեցէք լինիք ցած, Սուլէյման բէգն ուզում է, որ Երանալի հետ ձորումը խօշութէշ անի։

Ուրիշ խօսքով՝ այդ նշանակում էր. իջէք ձորը, ձեր յօժար կամքովը որքից զլուի մերկացէք, ունեցածներդ, զուցէ և կեանք-ներդ Սուլէյման բէգին մատաղ տուէք։

— Ի՞նչ անենք, պէրտէր, շփոթուած հարցրի իրիցին։

— Ի՞նչ պիտի անենք, ծափ տանք ու պար գանք. Եթէ անիծուած Սուլէյման բէգի երկիւղից կոնձածս օղին ջուր չըդառնար, ևս դիմէի, թէ ի՞նչ կանէի, ցած կերթայի ու ՚անշախմանիւ հրացանիս կոթով էնպէս կը թրիկացնէի Սուլէյման բէգի գլուխն, որ աչքերը բուռը կը կաթէին, բայց հիմի ճարս կտրած՝ պիտի գլուխս թեքեմ, հրամանին սպասեմ։

— Նուպ, ցած իջէք, գոչեց ներքեւից համբաւաբեր աւազակը՝ եթէ մի գդալ արիւններդ ձեզ համար բալցը է։ Սուլէյման բէգն ասում է, թէ էդպէս երանալներ հարիւրն է մորթել, դա էլ..»

Աւազակը չըկարաց վերջացնել իւր սպառնալիշը, նա սարսափեց, շբարով ձիու գլուխը յետ դարձրեց ու զուաց Դէպի իւր քնկերները։

— Նա ի՞նքն է։

— Նա ի՞նքն է, լսուեց Սուլէյման բէգի երկիւղալից ձայնը։

— Նա ի՞նքն է, հնչեց արձաղանգն ամբողջ խմբի մէջ, և ամէնքը

միասին, բոսկէական՝ աչք ձգեցին դէպի սարի մեր կիսի արևմտահարաւային կողմը, ու ական թօթափել՝ ամէն մէկն առանձնակի ձին յետ շրջեց ու մորակեց:

Ծոսկէ չանցաւ, Սուլէման բէզի և իւր խմբի հեղքն անգամ չերևաց. եթէ այն արագութեամբ երկու ժամ աշխանակէին, Գանձակն այս կողմը կը թողնէին:

—Ի՞նչ կը նշանակի, տէր հայր, զարմացական հարց տուի եօթ —Կայ, չոկայ, հեր (առիթը) սարի ներքեւի կողմից երևացող երեք ձիւարի մէջն է, պատասխանեց տէրբէրի փեսան, մազնացոյց անելով ինձ ձորի ներքեւը կանդնած երեք հեծեալներին:

—Վահ, բացականչեցի ես, մեր Նարեն, որքան նմանութիւն:

—Հէնց ինքն է, աղոյ ջան, հասրապեց իմ ծառան, չուխէն է միայն փոխել:

—Կացէք, կացէք, գոչեց տէրբէրը՝ ուշադրութեամբ աչքը դէպի ցած ուեւելով, էդ մարդն իր շէնք ու շնորհովը հայ է երևում. չըլինի թէ Յունոն է, թէ չէ Սուլէման բէզը հարիւր հայից երես չէր թեքիլ:

Մեր խօսակցութիւններն ինքն լսու ինքեան լնդհապուեցան, երբ մեր հերաքրքրութեան շարժառիթները մեր աչքից հեռացան. Զիս ւրբներն իւրեանց զրասրների դլուիները ցած դարձրին և ձորնի վայր գնացին:

### ԺԲ.

—Դէհ, պարոն, ձիանքը շարժենք, աճապարելն անհրաժեշտ է, անիծած Սուլէման բէզը մեզ ուշացրեց, մեծախօս անպիտան, հպարփանում էր՝ թէ հարիւր նրաննալ է մորթել, տեսար՝ հնց վախկու շների պէս պոները փորերի տսկը կոխեցին ու գլուխ առան, կորան: Երաւ, քեզ պարփիկ մարդ ասողի հայրն եմ օրհնելու պարոն, լաւ ես մրածել, գրակիդ վրայ փաթաթած մի կրոր կրաւով երկու խումբ աւազակներ շուաքիցդ անհետ եղան. հաւագասճակափիդ փայլող ասրդագլուխ քորոցն էլ երանալութեան նշան կարծեցին. փորձուած մարդ ես. զիփեցողների մօտ կարդարանաս, թէ կրաւը արևի տաքութիւնից ես ծածկել, որ վիզդ չը խանձուի, իսկ քորոցը կրաւը ամրացնելու համար ես կարել, իբր թէ չէր

կարելի առանց քորոցի ամրացնել, կամ հասարակ քորոցն անպէսք էր, անպատճառ երանալի կրծքի նշանի չափ ասովագլուխ քորոց էր հարկաւոր. իսկ սարերումը սպիտակ գլխովդ ու ասովաձև քորոցով երանալ ես ու երանալ:

—Կայակներդ թող, նկատեցի ես զուարճախօս տէրտէրին, թէպէս մասամբ նկատողութիւնդ ճիշդ է, բայց արդէն ժամն երկուսն է և մինչև լեռան գագաթը դարձեալ մեզ առ նուազը մի ժամ է հարկաւոր, իսկ մեր դարարկ սրամոքսներն իրենցը պահանջում են, գոնէ հետդ մի երկու հաց վերցնէիր, եթէ այս կողմովը դալու դիտաւորութիւն ունէիր:

Մեր խօսակցութիւնը կատարւում էր հովուի մօս կէս ժամ մեր գրասուներին հանգստութիւն բալուց և ճանապարհ ընկնելուց յետոյ:

—Փորիդ հոգսը թող ու ձիռւդ քիչ էլ նեղութիւն դուր, մինչև այս մի կորը բարձրանանք և մրնենք ուղիղ շատիլը. թէ չէ կը յարմարուի մեր գլխին վաղի առածը. «գալի ձեռից պրծանք, արջի հանդիպեցանք»: Աչքդ արևմուգը դարձրու, դես ինչ կը դեմնես երկու թմբան միջնը, մարը ձգեց դէպի ցած տէրտէրն և ցոյց դուեց դասնի չափ ձիաւորների մի խումբ, որոնք, ինչպէս երեսում էր, մեծ խորհրդի մէջ էին: Այժմ կասկածելու գեղիք չըմնաց. Սուլէյման բէգին փախցնող երեք հոգին այս խմբի անդամներիցն էին և երեք հոգուց մէկը նադօն ինքն էր, որին հիմա շուրջ էին բոլորել դասնի չափ ձիաւորներ և լսում էին նրա սրազուէրները:

Ոլքան ես նկատեցի իրանց հագուստներից՝ ձիաւորների եթէ ոչ բոլորը, գոնէ մեծամասնութիւնը նոր. Բայց իդու գաւառացի հայեր էին:

Նար որոշ աչքի էր ընկնում իւր դարագով մի քուրդ. եղէք նեայ դէգը ձեռքին, վահանը թեին, կեռակուց սուրը կողքին և չորս արրճանակ պատեանի մէջ ձիռւ թամբի գլխին ամրացրած:

Բոլորեքեան ընդհանրապէս որից գլուխ զինավառուած էին:

—Ի՞նչ ես քիթդ սրել մրիկ դալիս, պարօն, դարձաւ ինձ պէրտէրը, չես ճանաչում, շապը դրանցից հայեր են ու մէջգելը կանգնածը նա ինքն է, որ Սուլէյման բէգի լեղին ջուր կդրացրեց.

ու թէ որ Յունոն չըլինի, Յունոնից պակաս մօր ծիծ կորող չի երեռում: Տեսնում ես, ինքն իր ընկերների մէջ, ոնց որ մի հաւի ճուղը՝ սարերի թագաւոր արծուի առաջին, բայց, ինչպէս երեւում է, մարդի մէջը սիրո կայ. նայիր՝ մնց մարը ցցելով հրամաններ է տալիս ու բոլորը պատի հարսի պէս լոել լսում են:

— Հայ են, թէ թուրք են, ողջ մէկ է, պարասիանեցի քահանացին, բայց որ անվանդ մարդիկ չեն, անդարակոյս է, մեզ հարկաւոր է շուապել. չիս փեսնում, որ չար խորհրդի մէջ են և մեր գլխին մի փոթորիկ բարձրացնելու նպատակ ունին:

Արածս զուր պարուակ էր. ես շատ լաւ ճանաչեցի մեր նադոյին, բայց քահանացիցն էի կամենում թագցնել, նադոյի հետքն էի ուղում կորցնել:

— Լաւ հասկացար, ասաց տէրտէրը, մորիկ տուր նրանցից մէկը բաժանուեց ընկերներից և դէպի մեզ է բարձրանում:

— Այս, այն էլ ոչ հայ, այլ քուրդ, վրայ բերի ես, երեխ կամ մեր առաջը կտրող ընկերներ ունին այս մօրերքումը, կամ ուրիշ չար նպատակի համար է շուապում:

— Բարով խէրով դայ, դարձեալ կագակաբանեց երեցը, մենք արդէն ընկանք ուղիղ ճանապարհն և երկու բոսէից կսկսենք սարից իջնել, իսկ նա ձիուն ոյժ դալով ու շնչարգել ընկնիլով դեռ մի ժամ լեռ ունի բարձրանալու. մինչև նա մեզ կը հասնի, մենք Ահմօ-բէգի հետ պաօշակ անում կը լինինք:

Հա, հա, հա, հոհուալ սկսեց տէրտէրն և շարունակեց. հանաք չի անում մեր այդ բարեկամը. մեզ մօր պարզամաւոր է գալիս, մորիկ տուր՝ մնց է ձեռքով նշան դալիս, որ կանգնենք: Չ!, սիրելի քուրդ, չէ, շատ ես ուշացել. այս անդամ քո կորցրածը մեզ մօր չես գտնիլ, այս անդամ մեր երանալը ողարգամաւոր ընդունելու ժամանակ չունի, գնա ընկերներիդ ասա, եթէ կամենում են՝ թող շնորհ բերեն Ահմօ բէգի վրանը և կը դեսնին, թէ թնչպէս անվախ, աներկիւղ մի կողքի ձգուել ենք ու դառան խաշլամէն արամներիս դրակին խժում:

Այս անդամ քահանան իրաւունք ունէր իւր սնապարծութիւնների ու հեղնութիւնների պարկի բերանը լայն բանալու. ձիաւորը թեաւոր էլ լինէր՝ մեզ չէր կարող հասնիլ. մենք արդէն

Փալանթօքեանի կարարին էինք, իսկ նա սարի քառորդն էւ չէր բարձրացել:

Մի ընդարձակ կանաչազարդ լայնագարած դաշտ փռուել էր մեր առաջին, օրը պարզ էր և ամարացին, բայց լեռան գիլին անդադար սուացող, անոյշ քամին և լմում էր արեւի կիզիչ ոյժը բոսպէաբար՝ երկիւշն անհետացաւ մեզանից, մեզ սիրո փուխն լեռան հիւսացին սրորորում դաշտի վրայ արածող, բասնաւոր հօգերը: Աւելի ոգեսրուեցինք, երբ սարի բակին գինուած խոր ձորից դուրս եկանք ու այնուհետեւ մեր առաջի ոլորապոյլու, նեղ ու հարթ ճանապարհը հեշտացրեց մեր գնացքը:

Տէրուէրն ուսից հրացանն իջեցրեց, փողն ուղղեց դէպի վեր բարձրացող քուրդը, և մարով սպառնալիք անելուց յեփոյ՝ գլւխարկը հանեց, խոր գլուխ իջեցրեց քրդին և ասաց. գնա, մի հաց կեր, միւսը մարաշ փուր, որ հրացանս անչախմախ է, թէ չէ ճկութիս ելնդի չափ արճիճը հիմի վալուց սիրոդ խաշած կը լինէր:

Այսպէս թէ այնպէս, մենք արդէն լեռն իջել ենք և բարձրում ենք ամենամօր հովուին, օրը ժամանակ չունի մեր ողջունին պարասսաննուու. նա հազիւ է կարողանում իւր հասպազլուխ, երկար հովուական գաւազանով իջեցնել իւր վրց կայլիսելդ գամփռների կարագլութիւնը, որնք, այլապէս, անշուշտ մեզ ձիանց վրացից ցած կը քաշէին և կը ծուափէին:

Մեր կրկնակի ու եռակի հարցերին հովիւն այսքանը միայն կարողացաւ կարճ պարասիանել, թէ Ահմօ բէզի վրանը դիմացի Քաշալ կոշուած թափայի (թլուր) միւս երեսին է ու շուփով կը հանենք:

— Դէ՞ն, պարօն, շրապենք, ճանապարհներս հարթ ու կակուղ է, ասաց պէրուէրը, հիմի ձեր բոլորիդ փորի հետ՝ իմ սրամոքսս էլ իրաւունք ունի վեց-վեց անելու և Ահմօ բէզի սեր ու կարագի հետ՝ գառան խորովածի ախորժակ ունենալու, ափսն՝ որ մենք էլ պիտի սրիպուած լինինք աւելաբանը թողած՝ շուրանի պարուէրը պահելու, էն օրհնեալ հեղուկիցն Ահմօ բէզի մօդ չի գտնուիլ, անիւրաւը մարդի արիւն կը խմի, գինի չի խմիլ:

— Երաւ, այս երեց, ասացի ես, չէ որ դու երեկ երեկոյ ինձ և Զօհրաբ ամուն հասպար խօսք փուիր անսուաշ մնալ և բերանդ կա-

թիլ չառնել, արդէն շատ յարմար տեղ է, երկիւղից պրծանք, խնդրեմ արդարանաս, կիսալուրջ, կիսակափակ կարդացի տէրգէրի մեղադրականը:

— Ես մարդը մարդ չէ ով իր խօսքը չըպահի, շեշտեց քահանան: — Ի՞նչպէս, չէ որ դու քո բերանովդ խոսրովանեցար, որ երեք թէի բաժակ օղի ես դափարկել:

— Միզգդ բեր բառ առ բառ գուած խօսքու: — Անսուաղ գալ և ինձ ճանապարհ չըդրած՝ բերանդ կաթիլ չառնել:

— Եւ ես կափարել եմ:

— Ի՞նչպէս:

— Մինչեւ էս ըստէն էլ անսուաղ եմ, բերանս նշխար չի մորել: Ադամազ մութը նոր էր քաշուել, որ ձիս թամքեցի ու եկայ քեզ քնահարամ արի: Էն մը գուուզ այրու ցաւն էր կորել, որ քնահարամ լինէր, իր տանից վեր կենար, զար մեր հաւերի թառի վրացից երկու դմուռնիկ ճուղի բոնէր, փերահանս անէր, խաշէր, տաք բերէր կողքիս պատրաստէր ու գար թշերս պաշպչորելով ինձ զարթնացնէր, մի զաւ էլ գինի մօտս դնէր ու իր թիվիկ ձեռներով ճուղը փառափէր, (կորարել), մի թիքայ իմ բերանը դնէր, մինն իր. մնացածն էլ հացի մէջ փաթաթէր, ինձ համար պաշար կապէր: Անդէր, անդիրական, կոյր բաղդից հալածուած մի զզգուած տէրդէր եմ: իմ գիրուհուն Վարուած ինձ շատ համարեց, ձեռիցս առաւ, ուրիշ գէրգէրների էլ խղճմուանքն է բարձուել, թէ մէկ մէկ շարաթը մինը՝ հերթով իրանց գիրուհիներին ինձ հիւր լընկին: Ինչպէս որ Զօհրաբենց տանն երեկ երեկոյ քեզ հետ բերաններս փակել ենք, էլ հացի փշրունք չի առամիս տակն ընկել:

— Այդ առաջին մասը, իսկ երկրորդը, հարց պուի ես՝ երբ քահանան լսեց:

— Ես էլ քեզ քաջ հայագէտի տեղ եմ դրել, դու հօ հայոց լեզուի մէջ մեր գաւառի վերջին տգէտ քահանացից աւելի բորիկ ես եղել, որ մի կաթիլն ու երեք թէլի բաժակ հեղուկն իրարից չես կարողացել որոշել. լաւ վերլուծիր. կաթ, կաթ, կաթ=կաթիլ. քո թանգաղին արեովն եմ երդւում, մի անգամից էնպէս շըրպեցի, որ հափ կաթիլ չըմնաց բաժակումը. գիծ հօ չէի, որ քեզ պէս մեծ

մարդի մօտ խոսրակազանց դուրս դալի՛: Տէր Մ-ը մինչև օրս ինչ խօսք պուել է՝ կափարել է: Ինձ ուրիշ գրերգերից չըկարծես, որ երեւահանց հրեշտակ են ձեւանում, իսկ ներսից սարանին թարս են նալնում, սարանին էլ խարում են: Զէ, սիրելիս, ուր Մ-ը պարզ մարդ է, ամեն բան բաց աշկարաց է անում: Ես դինի խմում եմ, պարում եմ, գրուզ այլիներից մի երկուսին զրկում եմ, չըհաս պատկ եմ կարարում, շաբաթներով՝ երբ ժողովուրդը դաշտալին գործերի հետ լինելով եկեղեցի չի յաճախում, ժամ չեմ ասում, աթռուապարկան հասոյթի կէսն ուգում եմ, մեռելի հոգեբաժինը կամ ինքս եմ սպանում, անուշ անում և կամ դալն արգելում եմ և ամէն ինչ որ տէրգերին արգելուած է, անում եմ: Եղ պարճառաւ, դարի չի անցնիլ, որ ամիսներով ու շաբաթներով քահանայադործութիւնից չըզրկուիմ, փիլոն ծածկելու իրաւունք չըկորցնեմ:

— Ես այդ բոլորը լսել էի, բայց ինձ թոյլ չէի դալիս քեզ հարցնելու:

— Եաւր զմւր, քան թէ կեղծաւորում էիր ու սրբումդ միշտ կասկածներ պահում, աւելի լաւ էր ինձանից մէկ մէկ կը հարցնէիր և պատասխանը կը սրանայիր:

— Դարձե սլ ուշ չէ:

— Քիչ ուշ է և գեղին անյարմար, բայց երկիւ զն անցաւ, Ահմօ բէզի վրանը որքներիս դակին է, կարող եմ կարճօրէն քեզ քիչ ասել և դու շատ հասկացիր:

— Եմ բոլոր պակասութիւններս կարելի է երկու կարգի բաժանել, շարունակեց տէրգերը. առաջինը՝ ինչպէս մեղանչական մարդ՝ ենթակայ եմ մարդկալին թուլութիւնների, որովհերեւ քառասուն դարին չըմրած երիտասարդ եմ, անժամանակ զրկուել եմ դիրուհուց և դաք բնաւորութեան դէր եմ: Այդ բանում ես աւելի ներովութեան արժանի եմ, քան թէ ժամանակիս դէրգերներից շագերը, որոնց դիրուհիների վարդ պատաճ թշին մագի ծէրով թեթև դիպչես, արիւնը մօրուքդ ու երեսդ կը ներկի, բայց էլի աչքներն ուրիշի դրանն է. ու մի քանիսի դեղն էլ զիրեմ, որ մէկի գեղակ երկու կնիկ են պահում: Բայց ես իմ խոսրովանած յանցանքի համար երկու անգամ փիլոնազուրկ եմ եղել, իսկ իմ սիրելի կարգակիցները համ անում են, համ մարտում են և գեղումն էլ պարիւ-

ունին, ու պարզեների արժանացած են, որովհետեւ... Տէր Մ-ը  
բռնին և ցուցամարն իրարու շփեց: Իրը թէ կաշառք են ուսում:  
Խակ ինձանից հափ կոսէկի չեն կարող սրանալ, շարունակեց քա.  
հանան. պարան չեմ դալ, որ վիզները քցեն ու կախուին Զեմ  
թաղյուում, առողջ կազմուածքով, ախորժակս դրելը, բնաւորութիւնս  
ուրախ, սիրոս բարի մարդ եմ, իմ ժողովուրդը՝ բնութիւնիս հեփ  
հաշրուել է, փոշերեսակ սխալմունքներիս ներողամբաբար է միիկ  
քալիս ու չի գայթակլուում: Ուրեմն ումնից ինչ ունիմ թափցնելու.  
Թող ինձ դարողները, ով ինձանից աւելի անմեղ է, առաջին քարն  
ինքը գլխովս դաբ: Եդ ընչթցն է, որ կաշառքով սարի չափ մելքերի  
դէմ աչքեր կը փակին, խակ տէր Մ-ի աւազի հատիկը քարափի փեղ  
կընդունեն. Եդ ընչթցն է, որ իրանք և կը գործեն և վերի բար-  
ձին կը նստեն, խակ իմ լուի չափ պակասութիւնս ուղափ դրեղ կըն-  
դունեն: Զէ, պարոն, չէ, աշխարհքս դիս և ուս է, իրարոցից դես-  
նում ենք և ուսանում ենք. մեռել են, կորուել են, մինչև իրանք դարձ  
չըգան, իրանց յանձն առած պարմաւօրութիւնները չըկարարեն,  
ես իմ սովորութիւններիցս յեր կենալու չեմ. արել եմ, անում եմ  
և պիտի անեմ. որ դեղ բարակի՝ էնուեղ կորուի:

— Կարծեմ՝ մեծ պասի չափ բացադրութիւններիդ մէջ զերեղ-  
ուեց քո երկու կարգի բաժանած պակասութիւններդ. այնպէս չէ,  
ընդհարեցի ուէրպէրին:

— Ոչ, դեռ առաջին մասն էլ չըվերջացրի, բայց որովհետեւ  
անհամբեր ես, այդքանով բաւականանք և երկրորդ կարգի պակա-  
սութիւններիս մասին դարողութիւն դանք: Ասացի, որ ես արգելք  
եմ լինում աթոռապարկան և վիճակապարկան հասոյթներ դրալուն,  
կամ ինքս եմ արանում և ուրառում:

Այս բանն իմ ամենածանր, մինչև անդամ՝ մահացու յանցանքն  
է: Հայոց ազգն ապրում է և գոյութիւն ունի իր եկեղեցովն ու  
վանքերովը. իմ կարճ խելքով՝ կործանիր եկեղեցին, բնաջինջ կը լի-  
նիս և դու. խակ եկեղեցին ու վանքը դադարի քար ու կիրը չեն,  
ժողովուրդն ինքն է, իր ընդունութականներն են, իր Աստծու  
պաշտօնեաններն ու իր կրօնի աւանդապահ սպասաւորներն են. խակ  
մթէ ժողովուրդը մասնաւորապէս ապրուսո կուզի ապրելու համար,  
իր եկեղեցու պաշտօնեաններն էլ բերան ու սրամոքս ունին, նրանք

էլ նախ մարմինի հոգսը պիտի քաշեն, որ հոգւով դօրացած՝ և՛ ծառայեն և պիրանի գգնուին, և գործեն և ուսուցանեն, որ իրանց առաքբնի վարք ու բարքով իրանց հովուած հօփին զեկավարով լինին, և ի հարկէ, այդ լնպրեալները «Սիօնին են ծառայում, Սիօնից պիրի ուրիշն։ այնպէս չէ։

### —Անշուշու

—Բայց հիմա քեզ եմ հարցնում, Դու կը պահես քո տին մշականերին, որոնք փոխանակ այդիդ մշակելու, ծառերդ արմագիցն են կարում ու չորացնում և այդիդ ամացացնում։ Սա ինձ, արժանի են ներկայիս վանքերի համեղ պարագով փորերը որկացնողներից շարերը վանքի հացով ապրելու։

—Քո խօսքի և գործքի մէջ ես հակասութիւն եմ՝ պեսնում, պարասխանեցի ուրեգրին։

Դու աթոռապատկան հասոյթներն ինքդ ես ուրում, կամ կորում ես, որ մեր եկեղեցու պաշտօնեաները քաղցած մեռնին, կամ հեռանան, իսկ միւս կողմից մուանում ես, որ ինքդ քո ձեռքով մեր կիսաւեր քար ու կրի շնորհերը հիմքից իսպառ կործանում ես, ինչ է հօփն առանց հօվուի, ինչ է մեր աշխարհականութիւնն առանց հոգեորների, ինչ է քո եկեղեցին առանց սպասաւորների։

—Այս, մի կարճ միջոց վեասը մեծ կը լինի, պարասխանեց երեցը, ժողովուրդը կը սառչի իր աթոռից և իր տուքը կը կարի. աթոռի ձրիակեր պաշտօնեաները քիչ-քիչ կը վերջանան ու մի առժամանակ ամէն շարժում կարծես կանգ կառնի, բայց հոգ չէ, վագերը կը վերջանան, լաւերը կը շարանան և ամէն բան նորից կարգի կը նկնի։

—Իսկ Դու քեզ որո՞նց կարդումն ես դնում։

—Ո՞է, բնանից Դուրս գայ, քամին տանի, լաւերը շուրջում կը բարձրացնեն, ես օր ծերութեան կամ կսկսեմ օձի պէս հին շապիկս նորոգել, որ էս հասակումս, աչքովդ էլ բեսնես՝ մի՛ հաւատալ, կամ թէ չէ սրբածաք կը լինիմ «ի գոգն Աբրահամու» կերթամ և կամ փասափուսէս կը քաշեմ, տէրպէրութիւնին «Հոգոցն հանգուցելոց» կասեմ, օրական էնքան կը կոնձեմ, որ ոչ աչք բացանեմ, ոչ պաշտօն կապարեմ, ոչ ժողովրդին զայթակղութեան պարագառ լինիմ։ Կարակը մի կողմը, պարոն, մեր նմաններն այսուհետեւ

աւելորդ են, աշխարհն օր ըստ օրէ լուսաւորւմ է, Աստվածով եկող նոր սերունդը կը քննի չարիքի էական պարմառներն և իր եկեղեցուն կը նուիրի անձնանու էր պաշտօնեամեր, որոնք նոր շունչ, նոր ոդի կը թափանցեն ժողովրդի մէջ և կորցրածի կրկնապատիկը յետ կը բերեն:

—Եդքանը որ հասկանում ես, այ երէց, ընչի՞ ես ուրիշներին դարապարում, աշխատիր ինքդ քեզ ազատ կացուցանել մեղադրանքներից և թող ուրիշներն էլ քեզանից օրինակ վերցնեն:

—Զէ, սիրելիս, ես հասպացած ծառ եմ դառել, ինչպէս եկել եմ, էնալէս պիտի զնամ: Ի՞նչ ես ասում, պարոն, ախար ես մնց ուղղուեմ, ինձ պարուիրում են չըհաս չըպսակել, իսկ իրանք այդ անլուծելի պսակագիրոջ ձեռքը մի կրոր թուղթ են դալիս երկուշաբաթից, ուղարկում ինձ՝ թէ պսակիր. Բնչ է՝ թէ կթել են. քօ, բարի մարդ, թէ կթելու էր՝ ես կը կթէի: իմ ոչսարը դու լնչի իմ ձեռից խլեցիր...

—Տէրտէր, տէրտէր, մի յետ մոտիկ գոտը սարն ի վեր, գոչեց աներոջ քամակից եկող քահանայի վիսան:

